





Տպարանս փոխադրուած է Պապը ալի
նատտէսի թիւ 38, Իգտամ լրագրին դէմ:

ՀԱՅԿԱՆ Գ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

ՏՊԱՐԱՆ



ԿԱՅԻՔԱՂՆԱԷ

ՍԺԺՆ

ՅԱՇՆՈՂՆԱՅ

Մատենադարան, Մատենադարան, Մատենադարան
Մատենադարան



1883 ՏՊԱՐԱՆ 10 - ԿԻՔ 38

ՀԱՅԿԱՆ Գ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

Հայաստանի Խորհրդարանի Գրադարան
Հայաստանի Խորհրդարանի Գրադարան



ՀԱՆԳԵՍ

ՏԱՍՆՕՐԵԱՅ

هانراكيداق

مجموعه علوم

HANRAKIDAGUE

JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIQUE

Ե. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 32

10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902

ՄԱՅՐ ՄԸ ԻՐ ԴԵՌԱՏԻ ԱՂԶԿԱՆ

Աղջի՛կս, որ պիտ' ըլլաս կին,
Բա՛ց միայն եւ պարզ հոգին,
Դուքին համես ու անհուն.

Թող եւ վե՛ն սուրբ սերդ ալ
Մեղմէ վե՛ներն՝ վրհասեալ
Սքե՛րուն ու մսքե՛րուն :

Թող եւ յոյսդ անապակ՝
Դարմանէ ցաւ ու տանջանք.

Ու հաւատքի երգդ մեղմին,
Ձերդ համեսունկ մի նրէր.

Նրկինք քրո՛ւ սարածել
Խաղաղութիւն եւ չորս դին :

Նդի՛ր հրեշտակ հեզամբոյր,

Խօսքե՛րովդ քաղցրալուր,

Միտ շուշի սեր ու գութ,

Մտիկ քրե՛, դժբաղդին,

Հսկե՛ անտէր հիւանդին :

Աղիտքն քո վազե՛ շուտ,
Դորձե՛, երգե՛ անդադրուն,
Դորձով ազնիւ կ'ըլլաս դու,
Խինդով զըւարթ ու սիրուն,
Հաւատքովդ ալ ազդու :

Իսկ քե՛ քեզի տայ Ասուած՝
Բընական բարձր հաննար,
Նդի՛ր պարկե՛տ անձնուրաց,
Տրգէտն քո ալ խոնարհ :

Փառք, աղմուկ ու յաղթանակ,
Չըգէ մարդոց մեզ նամար,
« Սեր ու Հաւատք » սուրբ համակ.
Թո՛ղ առաջնորդ ըլլան յար :

Թե՛ կ'ուզես պարտքդ լրանայ
Ու չի խռովի քաղցր ճիւղ.

Կեանքդ անցո՛ւր մութ ու յուռ, ա՛հ,
Ձինչ է ալի՛ն մութին մեջ :

ՄԱՆՆԻՕՆ

Թարգմ. ԲՕԼԷ

Հիւսէյնիկ



ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԷՋ

« Հաստատել խորհելու, զգալու զործելու սովորութիւններ. ահա անոր մէջն է ամբողջ դաստիարակութիւնը »:

Գ. — ՄԱՐԴԿԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԾԵՆԴԱՎԱՅՐԸ. — ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԵՊԻ
ՄԵՐ ՀՈԳԻՆ — ԱՐՏԱՔԻՆ ԲԱՐԻՔՆԵՐ

8. Հոգի մ'ունիմ

Հոգի մ'ունիմ: Այս կը նշանակէ, հաստատապէս գիտեմ, որ աշխարհի վրայ եմբարիք գործելու, առաքինի լինելու, զիս շրջապատողները երջանկացնելու:

Հոգի մ'ունիմ: Այս դարձեալ կը նշանակէ, ես անասուններէն բարձր եմ, որովհետեւ պարտականութիւններ ունիմ կատարելու, եւ անոնք չունին, որովհետեւ գիտեմ թէ ես ազատ եմ եւ ամէն ըրածիս պատասխանատու, եւ թէ անոնք ոչ ազատ են եւ ոչ ալ պատասխանատու:

Գիտեմ որ հոգի մ'ունիմ, եւ տեսած նիւթական բաներուս պէս չեմ. Անոնք երբ քանդուին՝ անոնցմէ բան մը չմնար:

Ես հոգի մ'ունիմ, հանճարեղ եւ անտեսանելի, որ ոչ մի բան կրնայ եղծանել, որովհետեւ նիւթէ չինուած չէ:

Գիտեմ որ հոգի մ'ունիմ. կենդանիներու նման չեմ. պարսպակաւութիւններ ունիմ եւ կ'ուզեմ կատարել, որպէս զի ինքզինքս կատարելագործեմ:

9. Խօսող ձայնը

Անցեալ օր, Վարդուհին իրենց դրացի հայր Վահանին մրգաստանին քովէն կ'անցնէր: Խնձորներ կ'ախուած էին ծառէ մը, որմէ խեղճ մարդը մրգօղի կը շինէր ամէն տարի: Վարդուհին խնամիջապէս ձեռքն երկընցուց 2-3 հատ քաղեց ամենալաւերէն:

Մարդ տեսած չէր զինք, շուտ մը անկէ

հեռանալով ճանապարհին վրայ գնաց. Վարդուհին ձայն մը կը լսէր, որ իրեն կ'ըսէր. « գո՛ղ, գո՛ղ »: Գո՞ղն ոչ ոք կար. Վարդուհին ատոր վրայ վստահէր: Բայց եւ այնպէս ամբողջ ճանապարհի երկայնութեան կը լսուէր նոյն ձայնը « գո՛ղ, գո՛ղ »:

Աղջիկը տուն մտաւ. վազեց դէպ ի իր սենեակը, որպէս զի ուտէ խնձորները առանց մէկէ մը տեսնուելու: Բայց իր սենեակին մէջ, ինչպէս մրգաստանին քով, ինչպէս ճանապարհին՝ դարձեալ կը լսէր սոյն երկու բառը. « գո՛ղ, գո՛ղ »: Եւ Վարդուհի այն խնձորներն ուտելու քաջութիւնը չունեցաւ: Վերադարձաւ այն տեղն ուրկէ քաղած էր. նետեց զանոնք խնձորենիին տակ՝ յուսալով թէ հայր Վահան կը տեսնէ ու կը ժողուէ: Եւ կը վերադառնայ իր եկած ճամբով: Զայնը, այսինքն իր խղճին ձայնը այլ եւ չէր աղաղակէր այն երկու բառն, որ իրեն այնչափ նեղութիւն պատճառած էին: Բայց սրտին խորէն պզտիկ աղջիկը դեռ անհանգստութիւն կ'զգար, որովհետեւ նոյն իսկ սրբազրուած գեռ գործ մը տարուքեան հետք կը քողու:

10. Լաւ խորհեղաւսւ մը

Օր մը պզտիկ աղջիկ մը շատ չիփած էր: Դասարանին մէջ քովը քիչ մը ծոյլ բարեկամուհի մը ունէր որ դասը չգիտնալով պիտի պատժուէր: Պզտիկ աղջիկը կը փափաքէր անոր հարցուած ժամանակ ետեւէն ըսել: Բայց սկսաւ խորհիլ եւ իր խղճին հարցնել ըսելով. « Պէ՞տք է ետեւէն ըսել »: Խիղճն ինքնին պատասխանեց. « Ո՛չ, պէտք չէ ըսել, որովհետեւ արգելուած է, եւ քու առաջին պարտականութիւնդ է հնազանդիլ եւ ոչ թէ բարեկամիդ հաճելի ըլլալ վարժուհին խաբելով »: Եւ աղջիկը հնազանդեցաւ իր խղճին թէպէտ եւ սիրտը լեցուած էր, որովհետեւ իր բարեկամն յանդիմանեցին եւ պատժեցին:

Տղա՛ք, երբ կը հակամիտէք գործ մը ընել, որ ձեզ վարանում կը պատճառէ, ձեր խղճին հարցուցէք: Դժուար չէ. Վայրկեան մը խորհեցէք եւ ինքնիրեն ըսէք. « Այս պէ՞տք է ընեմ »: Զեր խիղճը ձեզ պիտի պատասխանէ: Լսեցե՛ք անոր եւ հնազանդեցե՛ք:

11. Սորվեցե՛ք ձեր պարսկամոլութիւնը նանցնալ

Տղա՛ք, փոքրիկ աղջիկնե՛ր, երիտասարդուհիներ՝, դուք կը կարծէք թէ կատարելապէս գիտէք, ի՛նչ որ ձեզ ներելի է եւ ի՛նչ որ ձեզ արգելուած է: Կը սխալիք դուք, դեռ բոլորը չգիտէք եւ պէտք է լաւ սորվիք ձեր պարտականութիւնը եւ լաւ ճանչնալ:

Ձեր պարտականութիւնը լաւ չճանչնալով ապացոյցն է, որ շատ անգամ կրկնած էք այն պակասութիւնը, որուն համար ներողութիւն խնդրած էք ըսելով. «Չգիտէի, եթէ գիտցած ըլլայի»: Լաւ ուրեմն, պէտք է գիտնալ: Պէտք է գիտնալ ի՛նչ որ կարելի է ընել, ի՛նչ բանէ որ պէտք է զգուշանալ, որպէս զի բարի եւ պատուաւոր աղջիկ մը լինիք: Ասոր համար ուշադրութեամբ լսեցէ՛ք ձեր վարժուհիին խրատներն ու խորհուրդները. այս խրատները ուշադրութեամբ կարդացէ՛ք, որ ձեզ կը սորվեցունէ ձեր պարտականութիւնները, մանաւանդ միշտ յիշեցէ՛ք այն լաւ խրատները:

Չանցե՛ք ձեր պարսկամոլութիւնները լաւ նանցնալ:

12. Թեթեւամտութիւն իբրեւ պարսկամոլութեան քցնամի

Ահաւաստի խելացի եւ բարի տղայ մը, որ կատարելապէս գիտէ թէ ի՞նչ պիտի ընէ եւ ի՛նչէ՞ պիտի զգուշանայ, որ լաւ սիրտ ունի, բայց յիմարութիւն յիմարութեան վրայ կը գործէ: Ինչո՞ւ համար, որովհետեւ թեթեւամիտ է:

Իր պարտականութիւնն է դասերը սիւրսելէն քանի մը վայրկեան առաջ դպրոցը լինել, բայց նա կը մոռնայ ժամացոյցը նայիլ եւ կ'ուշանայ:

Միտքը չպահելու տուն տանիլ ձայն գիրքերը, որ պէտք են իր դասերը պատրաստելու համար: Ձեռագործը առնը կը մոռնայ: Տրուած պարտականութիւններէն տարբեր պարտականութիւն մը կը կատարէ, պատրաստութեան ժամանակ ինչ որ պէտք է այն չխորհիր, ուրիշ բանի վրայ կը մըտածէ:

Մայրը հիւանդ է, կը մոռնայ նշանակ-

ուած ժամին դեղ տալ: Իր դրացին ծանուր բռնի մը պատճառաւ չփոթած մնացեր է, քովէն կ'անցնի առանց զայն տեսնելու եւ օգնելու որ տանի:

Կը տեսնէք որ թեթեւամտութիւնը ի՛նչպէս թշնամի է պարտականութեան: Կը տեսնէ՛ք, թէ ինչպէս արգելք կը լինի այս տըղային պէտք եղածն ընելու, որպէս զի իր անձն օգտակար լինի թէ՛ ուրիշներուն եւ թէ՛ իրեն համար աղէկ ըլլայ: Յաճախ իւրովի ըսելով. « Ձեռուքեր թեթեւամիտ ըլլալ »:

Վերջապէս կրնայ մարդ այդ չլինել:



ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՑԻՆԵՐԸ

Բոլոնեզիայի ընտանիքին պատկանող բոլոր ժողովուրդները վայրի վիճակի մէջ են, հակառակ եւրոպական քաղաքակիրթ ազգերու ջանքերուն՝ դեռ անոնց մէջ կը շարունակուի բարբարիկ սովորութիւններ և նոյն իսկ մարդակերութիւնը:

Բոլոր այս ժողովուրդներուն մէջ բարոյական ամէնէն մեծ դերը ունի Թապուլ: Բացատրենք թէ ի՛նչ է այդ: Թապուլ եղած առարկայ մը կամ մարդ մը՝ ուղղակի աստուածներու ազդեցութեան տակ գտնուելով՝ ոչ ոք կրնայ անոր ձեռք դպցնել: Օրինակի համար ցեղապետի մը գերեզմանը Թապուլ կը հռչակուի եւ մարդկային ո եւ է արարած չկրնար հոն ոտք դնել՝ առանց ամենասոսկալի պատիժներու ենթարկուելու: Նաակ մը՝ որ երկար ճամբորդութիւն մը պիտի ընէ՝ Թապուլ կ'ըլլայ, երբ ուտելիք մը կամ օգտակար կենդանի մը սպառելու վըրայ է Թապուլ կը հռչակուի եւ այլ եւս ոչ ոք կրնայ զայն որսալ՝ որչափ ատեն որ տեսէ այդ արգելքը:

Թապուլի սպասուորողներն՝ իրենք ալ կ'ենթարկուին այդ արգելքին, մինչեւ որոշեալ ժամանակ մը եւ ոչ մէկը հազորդակցութեան կը մտնէ իրեն հետ, չկրնար ձեռքով բանի մը դպչիլ, նոյն իսկ կերակուրը՝ առանց ձեռք դպցնելու՝ չան պէս ակռաներովը կ'ուտէ:


Նոր Զելանտացիները Մաորի անունով ալ կը ճանչցուին. յաղթանդամ, զեղեցիկ

են, կրակոտ ու չարքաշ: Միշտ վայրագ բռնութիւն մը ցոյց տուած են: Իրենց մարմինն աղտոտութիւնը աւածի կարգ անցնելիք բան է, միշտ ճարպով օծուած, ցեխով ծածկուած, գարշելի երեւոյթ մը ու հոտ մը ունին: Հագուստին շատ պարզ է քտեսակ մը բոյսի թելերէ հիւռուած կտաւ կը կապեն մեջքերնին եւ որ կ'իջնայ մինչեւ ծունգերնին: Յեղապետները կռնակնին կը ձգեն չան մորթէ շինուած վերարկու մը:

Չարդի համար շատ հոգ կը սանին: Խոշոր փետուրներ կը դնեն մագերծուն մէջ, ախանջին ծակէն կ'անցնեն ճերմակ թռչունի

վրայ սեւ ճանճեր կը նկարեն, իսկ օրիորդները կապոյտ ճանճեր: Կտտանքի պերճանքը չկրող՝ մինակ գերիններն ու ամենաստորին անհատները կան:

Ասոնց նաւակները միակտուր ծառի մը կոճղին մէջ փորուած կ'ըլլայ եւ շատ անգամ՝ մինչեւ 70 ոտք երկայնութիւն կ'ունենայ: Նաւակները կարմիր ներկուած են եւ փետուրներով զարդարուած: Ետեւի կողմը քիչ մը աւելի բարձր է և աթոռ մը կը ձեւացնէ, իսկ առջեւի կողմը սրածայր է եւ գլուխ մը կը ներկայացնէ սեւ աչքերով եւ ահագին դուրս երկնցած լեզուով մը:



փետուրներ: Կինները խեցիէ մանեակներ կը կախեն, ապակիէ կանաչ ուլունքներու համար հոգի կուտան:

Այս ցեղերը ամէնէն աւելի յարգ կուտան կտտանքին ⁽¹⁾, ամէն տարի կանոնաւորապէս դէմքերնին, մարմիննուն մէկ քանի մասերը կտտել կուտան. երեւուն վրայ իրարու մէջ անցած շրջանակներ կը գծեն. շրթունքներնուն վրայ սեւ ուղիղ գիծեր, իսկ բերանին անկիւնը նիզակածեւ կը կըտտեն: Երիտասարդ տղաքները քիթներնուն

(1) Երեսօթադէմ գացող հայ ուխտաւորներուն ձեռքերնուն վրայ շինել տուած հաճինքուն պէս:

Նոր Զելանտացիները մարդակեր են: Կը պատմեն թէ երբ անգլիացի միսիոնարներ առաջին տարիները Նոր Զելանտա դաշին քրիստոնէութիւնը քարոզելու, նորաջ հաւատ ընկ ծերունի կին մը՝ իր մահաւան անկողինին մէջ՝ իբր վերջին շնորհ եւ օրհնութիւն իր քով կեցող միսիոնարէն կը խնդրէր. . . տղու մը թեւը՝ ուտելու համար: Պատերազմէ մը ետքը յաղթական կողմը կ'իյնայ վեռեալներուն ու վիրաւորեալներուն վրայ եւապիւնայ կը յօշոտէ եւ կ'ուտէ: Մարդու մը մարմինն ամէնէն անդարար տեղը կը նկատուի գլուխը. կը կարծեն թէ

հակառակորդին ուղեղն ուտելով անոր բուրդը ոչ թե ու կորովն իրեն կ'անցնի:

Երբ ցեղապետ մը մեռնի՝ առանձնակներով գերի կ'սպաննեն անոր գերեզմանին վրայ եւ դեռ միսերը չզաղած կ'ուտեն կը լմնցնեն խեղճերուն դիակները: Հնդկաստանի ղեջ եղածին պէս, հոս ալ ազնուական կիներն ու աղջիկներն իրենց ամուսինին ու հօրը գերեզմանին վրայ անձխասպան կ'ըլլան, եւ կամ, աւելի ճիշդը խօսելով՝ կը սպաննեն:

Այսօր անգլիական կառավարութիւնը ոգի ի բռին կ'աշխատի քաղաքակրթութեան ճամբուն մէջ պահելու այս ցեղերը: Որոնք շատ մը իմացակալն ու ֆիզիքական բարեմասնութիւններով օժտուած են:



ՈՍԿԾ ԲԶԵՁԸ

(Շար. 31րդ քիւն)

Եւ անոր երկնցուցի թուղթը առանց ուրիշ որ եւ է դիտողութեան՝ զանի չզայրացնելու համար. բայց ես շատ զարմացած էի խօսակցութեան առած դարձուածքին վրայ. իր գէշ բնագործիւնը զին կը տագնապէր. — Գալով պատենամթերին ուրուագիրին, պարզապէս տեսանելի մանգլիւքներ չունէր, եւ անկասկած ամբողջութիւնը կը նմանէր մեռելի մը գանկին սովորական պատկերին:

Նորէն առաւ իր թուղթը բուսական խիստ դէմքով մը: Եւ զանիկա ճմռթկելու վրայ էր, անշուշտ ցեղիկը նեղելու համար, երբ իր նայուածքը մեքենապէս կեցաւ պատկերին վրայ, որ յանկարծ այնպէս թուեցաւ թէ իր ուշադրութիւնը գրաւեց: Մէկ վայրկեանի մէջ իր դէմքը սաստիկ կարմրեցաւ, ապա խիստ տոգունեցաւ: Քանի մը բոպէ, առանց տեղէն շարժելու շարունակեց մանրակրկիտ կերպով քննել պատկերը: Վերջապէս ելաւ սեղանին վրայէն աշտանակ մը առաւ, եւ զնոց նստիլ սենեակին միւս անկիւնը արկղի մը վրայ: Հոն՝ նորէն սկսաւ անձկութիւնով քննել թուղթը, գոր կը դարձնէր ամեն կողմէ: Սակայն բան մը չէր

ըսեր, եւ իր վարմունքը ինծի վերջին աստիճան զարմանք կը պատճառէր: Սակայն խոհեմութիւն համարեցի որ եւ է մեկնութիւնով չզայրացնել իր աճուն գէշ բնաւորութիւնը: Վերջապէս գրպանէն թղթապանակն հանելով հոն դրաւ թուղթը եւ պահեց գրաւեղանի մը մէջ զոր գոցեց բանալիով: Այն ատեն աւելի հանդարտ երեւոյթ մը առաւ, բայց իր առաջին յափշտակութիւնը կատարելապէս անցած էր: Որչափ որ իրիկունը կը յառաջանար կամաց կամաց թաղուեցաւ իր մտածումներուն մէջ, եւ իմ խօսքերէս ոչ մէկը կը ցաւ զանի սթափեցընել: Դիտաւորութիւն ունէի գիշերը անցնել հիւղին մէջ, բայց տեսնելով հիւրընկալիս գէշ վիճակը, որոջեցի հրաժեշտ տալ իրեն: Զիս վար դնելու համար չպնդեց, բայց մեկնած ատենս ձեռքս սեղմեց գորովանքով:

Գրեթէ ամիս մը անցած էր այս պատահարէն ետք (եւ այս միջոցին Լըկրէնտի վերայ խօսուիլը չէի լսեր) երբ Քարլսթընի մէջ ընդունեցի Ժիւրիգէրի այցելութիւնը: Երբէք այնքան սրտադողի մէջ տեսած չէի բարի սեւ ծերունին, եւ վախճայ ձոր չըլլայ թէ բարեկամիս ծանր դէպք մը պատահած ըլլայ:

— Է՛հ, լաւ. Ժիւր, ըսի, ի՞նչ նոր լուր կայ, ի՞նչպէս է տէրդ:

— Բարէ՛, ճշմարիտը ըսելու համար, մասաւս ինքը ոչ ըլլալ այնքան լաւ:

— Լաւ չէ՞, ինչէ՞ն կը տառապի:

— Ո՛հ, ան երբէք տանջուիլ, բայց ան խիստ հիւանդ:

— Խիստ հիւանդ, Ժիւրիգէր, Է՛հ. ինչո՞ւ անմիջապէս չըսիր. Պառկած է:

— Ո՛չ. այն ոչ պառկիլ անկողին. անոր ոչ չմէկ տեղը զաւիլ: Ահաւաճիկ արդարեւ ո՞ւր կը ծակի մուծակը: Իմ գլուխ ըլլալ շատ անհանգիստ խեղճ մասա Ուիլիին համար:

— Ժիւրիգէր, կուզեմ որ աղէկ հասկըցնես ինչ որ պատմեցիր: Ըսիր որ տէրդ հիւանդ է: Ոնիկա քեզի չըսա՞ւ թէ ի՞նչ բանէ կը տառապի:

— Ո՛հ, Մասա, ո՛չ արժեք միայն յոգնեցնել այդո՞ր համար: Մասա Ուիլլ ըսել թէ ինք ոչ ունենալ բան քիչ: Բայց այն առտեն ինչո՞ւ ինք երթալ եւ գալ բոլորովին մտածկոտ: Գլուխը կայս, կունակը ծռած եւ

տոճգոյն սագի մը պէս: Եւ այն ատեն ինչո՞ւ ինք միշտ գրել թուանշաններ...:

— Ի՞նչ գրել.

— Թիւեր՝ նշաններով, քարետախտակի մը վրայ, բոլորովին նորօրինակ նշաններ զոր ես ունենալ երբէք տեսած: Ես սխիլ վախնալ. ճշմարիտ: Ես պարտիլ միշտ հսկել իր վրայ: Անցած օր մեկնեցաւ արեւածագէն առաջ, և ամբողջ սուրբ օրը տագնապեցաւ: Ես այն ատեն կտրել աղուոր դաւազան, անոր տալու համար լաւ ուղղութիւն բոլոր սատանաներէն, երբ ինք դառնալ: Բայց ես անասուն, ոչ ունենալ քաջատուրութիւն, ինք ունենալ այնքան դժբաղդ երեւոյթ մը:

— Ի՞նչ... Ա՛հ, այո՛, կը հասկնամ: Է՛հ, լա՛ւ, ամէնէն ետք. կը կարծեմ որ լաւ ըրած ես խեղճ տղային հանդէպ խիստ չի գտնուելով: Մի՛ ձեծեր զանիկա, Ժիւրիգէր: Անիկա ի վիճակի չէ գէշ վարմունքներու հանդուրժելու: Բայց չե՞ս կրնար գաղափար մը կազմել այն բանին վրայ՝ որ առթած է այս հիւանդութիւնը. կամ մանաւանդ այս վարմունքի փոփոխութիւնը: Զեզ տեսնելէս ի վեր իրեն ցաւալի բան մը պատահած է:

— Ո՛չ Մասսա, ոչ պատահիլ ցաւալի բան մը անկէ ի վեր, բայց առաջ, կը կասկածիմ, այն միւսնոյն օրը որ դուք գալ:

— Ինչպէ՞ս: Ի՞նչ ըսել կուզես.

— Օ՛հ, Մասսա, ես ուզել խօսիլ փսէզին վրայ, ահաւասիկ ամէնը:

— Ի՞նչ բանի վրայ:

— Փսէզին վրայ: — Ես ըլլալ շատ ըստոյգ, Մասսա Ուիլլի գլուխը խածնել այն ոսկիէ փսէզը, քանի մը տեղերէ:

— Եւ ի՞նչ իրաւունքով, Ժիւրիգէ՛ր, այդպէս կ'ենթադրէք:

— Ինք ունենալ բաւական ճանկեր, ասոր համար, և բերան մըն ալ: Ես երբէք ունենալ տեսած այդպիսի դիւական փսէզ մը: Անիկա խածնել. ինչ բան որ մօտենայ իրեն: Մասսա Ուիլլի զանի նախ առնել, բայց չուտով թող տալ. ճշմարիտ: Մասսա Ուիլլի վստահաբար խայթում էր այն ատեն՝ ես ոչ սիրել բնաւ փսէզին բերանը, ես ոչ գիտնալ ինչո՞ւ, բայց ես ոչ ուզել առնել մատներովս: Ես առնել զանի թուղթի կտորով մը զոր ես գտնել, ես զանիկա

դնել թուղթի մէջ և խոթել թուղթի կըտորը բերանին մէջ, ահաւասիկ ինչպէս:

— Եւ դուն կը կարծե՞ս որ այս բզէզը իրապէս խայթած է տէրդ. և այս խայթումը զանի հիւանդացուցած է:

— Ես ո՛չ կարծել, ես հոտ առնել: Ինչո՞ւ համար ինք միշտ երազել ոսկիի վրայ, եթէ ոսկիէ բսէզէն ոչ խայթում, ես ունենալ լսած արդէն այս ոսկիէ փսէզներուն վրայ խօսուիլը:

— Բայց ինչպէ՞ս գիտես որ ոսկիի վրայ կ'երազէ անիկա:

— Ի՞նչպէս ես գիտնալ: Է՛հ, որովհետեւ ինք խօսիլ, նոյն խօս քնացած ատեն: Ահա՛ թէ ես ինչպէս գիտնալ:

— Ամէնէն ետքը, Ժիւրիգէր, կարելի է իրաւունք ունիս: Բայց ի՞նչ երջանիկ առիթով այսօր ձեր այցելութիւնը ընդունելու պատիւը ունիմ:

— Ես ո՛չ հասկնալ, Մասսա:

— Պ. Լըկրէնտէն լո՞ւր մը կը բերէք.

— Ո՛չ, Մասսա, ես բերել ասիկա: Եւ Ժիւրիգէր ինծի տուաւ տոմսակ մը որուն պարունակութիւնն է հետեւեալը:

« Սիրելիս,

« Ինչո՞ւ համար ձեզ չեմ տեսներ երկար ատենէ ի վեր: Կը յուսամ որ իմ կողմէ եղած փոքրիկ տմարդութիւնէ մը սրղողելու տղայութիւնը ունեցած չէք. բայց ո՛չ, ասիկա խիստ անհաւանական է:

« Անկէ ի վեր որ ձեզ չտեսայ, շատ անհանգիստ եղայ: Զեզի ըսելիք բան մը ունիմ, բայց հազիւ գիտեմ թէ ինչպէս ըսեմ: Զեզի զանիկա. կամ ինչպէ՞ս պէտք է ըսեմ:

« Այս վերջին օրերս շատ աղէկ չէի, և խեղճ ձեր Ժիւր գիւ կը ձանձրացնէ, համբերութիւնս կը հատցնէ ի՞նչ դիտաւորութիւններուն չափ բարի ռազդրութիւններով: Կը հաւատա՞ք: Անցած օր պատրաստած էր խոշոր գաւազան մը զիս պատժելու համար, որովհետեւ փախած էի և ամբողջ Սուրբ օրը անցուցած էի երկրին բըլիւններուն մէջ, ճշմարիտը՝ կը կալծեմ որ գէշ կերպարանքս միայն աղատեց զիս գաւազանի հարուածներէն:

« Հաւաքածոներուն վրայ բան մը չաւելցուցի մեր տեմակցութենէն ի վեր,

« Եթէ կրնաք, ջանացէք ճառքայ ելլել

Ժիւրիդէրի հետ գալու համար, եկե՛ք, եկե՛ք, Ձեզ կ'ուզեմ տեսնել այս իրիկուն կարեւոր գործի մը համար: Կը վստահացնեմ ձեզ թէ անիկա խիստ կարեւոր է:

Ձեր անձնուէր բարեկամը

« Ուիլեմ Լըկրէնտ »

Այս տոմսակը այնպիսի եղանակով մը գրուած էր որ, շատ անհամբարութիւն պատճառեց ինծի: Այս ոճը բացարձակապէս կը տարբերէր Լըկրէնտի սովորական ձէշէն: Ո՞ր սատանային վրայ կը մտածէր: Ի՞նչ նոր տարօրինակ մտածում մը եղած էր իր անընկճելի խելքին: Կարգադրելու ի՞նչ « խիստ կարեւոր գործ » կրնար ունենալ: Ժանօթութիւնը՝ զոր Ժիւրիդէր տուած էր ինծի անոր վրայ, բարեգուշակ չէր: Կը դողդղայի որ չըլլայ թէ կամաց կամաց, բաղդին շարունակական ճնշումին տակ, բարեկամիս բանականութիւնը անսովոր կերպով խանգարի: Այսպէս՝ առանց վայրկեան մը վարանելու խափշիկին ընկերացայ:

Քարափը հասնելով, նշմարեցի բոլորովին նոր մանգաղ մը եւ երեք բահեր, որ կը կենային յատակը այն նաւակին՝ ուր կիջնէինք:

— Ի՞նչ են այս ամէնը, Ժիւր, հարցուցի:

— Ասիկա, մանգաղ մը եւ բահեր, Մասսա:

— Կը տեսնեմ ասիկա, բայց ասոնք ի՞նչ գործ ունին հոս:

— Մասսա Ուիլ ըսել ինծի զնել քաղաքէն մանգաղ եւ բահեր, եւ սատանան գիտնալ որչափ ստակ ինծի տալ ասոր համար:

Բայց հոգիդ սիրես, Մասսա Ուիլ ի՞նչ պիտի ընէ մանգաղով եւ բահերով:

— Ես ոչ գիտնալ, եւ սատանան տանիլ զիս, եթէ Մասսա ինձմէ աւելի գիտնալ: Այս ամէնը փոսկէն կուգայ:

Տեսնելով որ չէի կրնար լոյս մը առնել Ժիւրիդէրէ, որուն միտքը կարծես բոլորովին թաղուած էր բզէզին խնդիրովը, իջայ նաւակին մէջ, եւ առագաստ պարզեցի: Գեղեցիկ եւ զօրաւոր հով մը մեզ արագօրէն հղեց Մուլթրի անտառին հիւսիսային կողմի փոքրիկ ծոցը, եւ գրեթէ երկու մղձոտքով քալելէ ետք հիւղակը հասանք:

Կէս օրէն ետք ժամը գրեթէ երեքն էր երբ հասանք: Լըկրէնտ մեզի կ'ըստատէր խիստ անհամբարութիւնով: Ձեռքս սեղմեց ջղային եռանդով մը որ զիս վրդովեց եւ կոսկածներս աւելցուց: Իր դէմքը ուրուականի մը տփգունութիւնը ունէր, որ իր աչքերը, բնականօրէն խիստ ընկղմած, գերբնական փայլով մը կը շողային:

Իր առողջութեան վերաբերեալ քանի մը հարցումներէ ետք հարցուցի թէ, ըսելու բան մը գտնելով, տեղապահ Ժ... վերջապէս իրեն դարձուցա՞մ էր բզէզը:

— Ո՛հ, այո՛, պատասխանեց շատ կարմրելով, երէկ առտու ինծի դարձուց զանի: Աշխարհի վրայ ձրի չպիտի զատուէի այն բզէզէն: Գիտէ՞ք որ Ժիւրիդէր կատարելապէս իրաւունք ունի:

— Ի՞նչ բանի մէջ, հարցուցի՝ տիկեր նախազգացումով մը:

— Կոսկածելով որ անիկա իրական ոսկիէ բզէզ մըն է:

Ասիկա ըսաւ խորին լըճութիւնով մը որ ինծի անպատում նեղութիւն պատճառեց:

— Այս բզէզը զիս պիտի հարստացնէ, շարունակեց յաղթական ժպիտով մը, անիկա զիս պիտի հաստատէ իմ ընտանեկան կալուածներուն մէջ: Ի՞նչ կայ ուրեմն զարմանալու որ անոր այնքան յարգ կուտամ: Որովհետեւ բաղդը յարմար դատած է զանի ինծի շնորհելու, պատշաճ կերպով պիտի գործածեմ զանիկա եւ ձեռք պիտի ձրեմ՝ այն ոսկին՝ որուն ապացոյցն է ան: Ժիւրիդէ՛ր, բզէզը ինծի բեր:

— Ի՞նչ, փսէզը, Մասսա՛, ես աւելի լաւ համարիլ ոչ խառնուիլ այս փոէզին, Դուք բերէք:

Այն ատեն, Լըկրէնտ ելաւ ծանր եւ հանդիտաւոր դէմքով մը, ու գնաց ինծի բերել պատենաթեւը՝ որ դրուած էր ապակեղարանի մը մէջ: Անիկա չքեղ բզէզ մըն էր, անծանօթ այս դարու բնապատումներուն, եւ հետեւաբար գիտական տեսակէտով մեծ արժէք մը ունէր: Նրկու սեւ ու կլոր բիծեր ունէր կոնակին վաճրի մէկ կողմը, եւ միւս մէկ կողմը երկարած մեծ բիծ մը: Վերնաթեւերը, չափազանցօրէն պինդ եւ փայլուն, փայլեցուցած ոսկիի կը նմանէին: Միջատը նշմարելիօրէն ծանր էր, եւ ամէն բան ա-

դէկ քննուելով ժիւրիդէրը չէի կրնար պարտաւել իր կարծիքին համար : Բայց Լըկընտոնոր հետ համամիտ զտնուեցաւ. ասոր վրայ, ահաւասիկ ինչ որ ինծի անկարելի էր հասկընալ, և եթէ կեանքս կորսնցնէի, չպիտի կրնայի լուծել հանելուկը :

— Չեզ բերել տուի, ըսաւ փառաւոր կերպով մը, երբ աւարտեցի միջատը քննեալս : ձեզ բերել տուի, որովհետեւ պէտք ունիմ ձեր խրատին և ձեր զգոնութեան, լըրացնելու համար տեսութիւնները ճակատագրին և բզէզիդ :

— Սիրելի Լըկընտ, պողացի զանի ընդմիջելով, արդարեւ ձեր վիճակը լաւ չէ, և աղէկ պիտի ընէք, եթէ քանի մը զգուշութիւն ընէիք : Անկողին պիտի պառկիք և ես ձեզի հետ պիտի մնամ մինչեւ որ ապիկա անցնի : Դուք ջերմ ունիք, և...

— Երակս նայեցէ՛ք, ըսաւ :

Երակը նայեցայ, և ճշմարտը ըսելու համար, ջերմի ամենափոքր աստանիչ մը իսկ չգտայ :

— Բայց դուք կրնայիք հիւանդ ըլլալ առանց ջերմ ունենալու : Ներեցէք որ այս անգամ դեղագիր մը տամ ձեզի : Նախ անկողին պիտի պառկիք : Ետք...

— Կը խաբուիք, ընդմիջեց, այնչափ աղէկ եմ, որչափ չէի յուսար ըլլալ, այն գրգռութեան վիճակիս մէջ ուր կը գտնուիմ : Եթէ ճշմարտապէս կ'ողէք զիս տեսնել բոլորովին աղէկ վիճակի մը մէջ : պիտի մեղմէք այս գրգռութիւնը :

— Եւ ի՞նչ պէտք է ասոր համար :

— Շատ դիւրին է : Ժիւրիդէր և ես կը մեկնինք արշաւանք մը ընելու համար բըլուրներուն մէջ, և այս արշաւանքին մէջ պէտք պիտի ունենանք անձի մը՝ որուն վըրայ կարենանք բոլորովին վստահիլ : Դուք էք այն միակ անձը՝ որ կրնայ ինծի տայ այս ծառայութիւնը : Եթէ մեր ձեռնարկը յաջողի կամ ձախողի, այս կամ այն կերպով պիտի մեղմուի այն գրգռութիւնը զոր հիմա կը տեսնէք վրաս :

— Շատ կը փափաքեմ յարեցի, ձեզի ծառայել ամէն բանի մէջ : Բայց կը կարծէ՞ք որ այդ դժոխային պատենաթեւը յարաբերութիւն ունի ձեր բլուրներուն մէջ ընելիք արշաւանքին հետ :

— Այո՛, անտարակոյժ :

— Այն ատեն, Լըկընտ, անկարելի է որ ընկերակցիմ այսքան ցնական ձեռնարկի մը :

— Կը ցաւիմ, չա՛տ կը ցաւիմ, վասն զի այսպէս պէտք է միայն մեր վրայ վստահինք :

— Միայն ձե՞ր վրայ վստահիլ : Ինչո՞ւ մարդը յիմար է՞ կ'երդնում : — Բայց, անհնա՞րդ ո՞րչափ ատեն պիտի տուէ ձեր բոլոր ցակայութիւնը :

— Հաւանաբար ամբողջ գիշերը : Իսկոյն պիտի մեկնինք, և ամէն պարագայի տակ պիտի դառնանք արեւածագին :

— Եւ դուք կը խոստանաք ինծի, խօսք կուտաք որ երբ անգամ մը անցնի այս քրմահաճոյքը և լըծուի բզէզին խնդիրը — Աստուած իմ — նորէն հիւղը պիտի մտնէք հետեւելու համար իմ պատուէրներուս չիւրեւ ձեր բժիշկը :


— Այո՛, կը խոստանամ ձեզի, և հիմա մեկնինք : որովհետեւ կորսնցնելու ժամանակ չունինք :

Սրտաբեկ ընկերացայ բարեկամիս : Ժամը չորսին ճամբայ ելանք Լըկընտ, Ժիւրիդէր, շունը և ես : Ժիւրիդէր առած էր մանգաղը և բահիրը, ու պնդած էր ամբողջ բեռերը ինք առնել : աւելի ինծի երեւցածին նայելով, այս գործիքներէն մէկը իմ տիրոջ ձեռքին մէջ չթողելու վախէն, քան եռանդի կամ հաճոյակապութեան չափազանցութենէն : Ասկէ զատ, շունի մը բնաւորութիւնը ունէր ան, և ինչ որ ըսաւ ճամբորդութեան միջոցին, ասիկա եղաւ : Անիծուած բզեզ, եւ կը կրէի երկու գազառկ լապտեր : գառով Լըկընտի, անիկա բաւականացած էր բզէզովը զոր կը բռնէր լարի մը ծայրը կասկած և զոր կը դարձնէր ամէն կողմ, մոգի մը ձեւերով : Զիտ քալելով : Երբ կը դիտէի բարեկամիս խելագարութեան այս վերջին անուրանալի ապացոյցը, հազիւ կրցայ արցունքներս զսպել : Ահա՛ թեքի սակայն որ աւելի աղէկ էր պատկեր իր քմահաճոյքը, գէթ առժամապէս, կամ մինչեւ որ կարենայ ձեռք առնել աւելի զօրաւոր միջոցներ յաջողութեան հաւանականութիւնով մը : Այն ատեն փորձեցի, բայց անօգուտ, զանի արշաւանքէն ետ կեցնել : Ան յաջողած էր : Գիւ համոզել որ իրեն ընկերանամ և այնպէս կը թոյլէր թէ չատ քիչ տրամա-

դիր էր անկարեւոր նիւթերու վրայ խոսակցելու: Բոլոր հարցումներու մէկ պատասխան մը կուտար. «Պիտի տեսնե՞նք»:

(Շարունակելի)

Թարգմ. ԱՇՈՏ Յ. ՊԱՉՊՁԵՆԱՆ




ԵՐԵՍՈՒՆ ՅԱՐԿՈՎ ՏՈՒՆ ՄԸ

Նիւ-Եօրք, հինգերորդ ծառուղիին մէջ նոր տունի մը հիմերը դնելու վրայ են: Խորունկ փոս մը մասամբ ծածկող առիւտա-

տանին, մինչդեռ հակառակ ուղղութեամբ եկող ուրիշ վակոններ կրախիճ կը բերեն և որոշուած տեղը կանգ կ'առնեն՝ պարունակութիւննին փոսին մէջ թափելու համար. այս շարժումին կը հետեւի շոգեշարժ մեքենայի մը սուլումը եւ շոգեվար մուրճին թոփիւնը որ կրախիճը ծեծելով կը կարծրացնէ:

Գործաւորի պէտքերէն մէկուն կը հարցնենք. «Այս տունը քանի՞ յարկ պիտի ունենայ: — Երեսուն: — Երեսուն, կը կրկնենք ապշած, ասանկ պզտիկ տեղի մը վրայ երեսուն յարկ պիտի ելլաք:»



կամածի մը վրայ անբացատրելի քառս մը կը տիրէ. մետաղեայ զերաններ, ամէն մեծութեամբ՝ կրանիթի ահագին կտորներու հետ խառն ի խառն գետին ձգուած են. հուժկու մեքենաներ գետինը կը փորեն եւ ինքնաբեր շարժումով մը ելած հողը վակոններու մէջ կը լեցնեն՝ զոչք մարդիկ հըրելով աշխատութեան վայլէն հեռու կը

Իրաւ ու այդ հոկային խառնիսը առ առաւելն երեսուն մէթը երկայն եւ տասը մէթը լայն գետին մըն է: Նիւ-Եօրքի մէջ հողերը քիչ մը խնայողութեամբ կը գործածեն. հոն մէկ քառակուսի մէթը գրեթէ 375 Օսմանեան ռսկի կ'արժէ. եւ Ամկրիկացի ճարտարագէտները՝ ընդարձակ տուներու տեղ՝ բարձր շէնքեր կը շինեն:

Կը մտածէք անշուշտ թէ ինչ աստիճանի ամուր հիմեր կը ձգեն ասանկ հսկայ շէնքեր վերցնելու համար: Դուք անձամբ դատեցէք, երկաթեայ նեղ սանդուղով մը 15 մէթր խորութեան մը մէջ կրանիթէ յատակի մը վրայ կը հասնինք. չորս կողմերնիս երկաթեայ ահագին գերաններ կը ցուին՝ նման մայր եկեղեցիներու կամարը բռնող կոթողներուն, ասոնց ամէն մէկը 14 մէթր բարձրութիւն եւ 2 մէթր թանձրութիւն ունի եւ 52,000 քիլո կը կշռէ: Այս գերանները որ 18 հատ են ամբողջ շէնքին ծանրութիւնը պիտի վերցնեն: Որքան որ դիմացկուն հիմ մը կրնան նկատուիլ ասոնք, ճարտարապետները ամէն ապահովութիւն ունենալու համար շէնքին չորս անկիւններուն տակ զետեղած են ջրաբաշխական մամուլներ, որպէս զի եթէ գետինը չոքի կամ հողի խաւերը չարժին՝ կարելի ըլլայ տունը հաստատուն վիճակի մէջ պահել: Սոյն գերաններն հաստատուած են երկաթէ կապերով իրար անցած կրանիթեայ կոյտերու վրայ, որոնք կը հանգչին ծեծուած կրախիճէ գետնի մը վրայ, եւ կրախիճէ խաւը տարածելէ առաջ գետնին մէջ գամած են 1200 շոճի. 12 մէթր երկայնութեամբ եւ իրարմէ 60 սանթիմէթր հեռաւորութեամբ: Այս կոճղերուն ամէն մէկը 20,000 քիլոկրամ ծանրութիւն կրնայ վերցնել:

* *

Երեք շաբաթ յետոյ անգամ մըն ալ կուգանք այցելել մեր շէնքին. առաջին անգամուն հիմերը նոր սկսած էին, հիմա՝ երկաթեայ տասն եւ վեց յարկերը աւարտած են: Աչքերնուս հաւատալնիս չիգար, կարծես պարիկի մը գաւազանը եկեր է կատարել այս հսկայ գործը: Բայց աշխատութիւնը կը շարունակուի, եւ պողպատեայ շէնքը օրական մէյ մէկ յարկ կը բարձրանայ: Տունին բոլոր մասերը երկաթեայ են, ամէնէն պզտիկ պտուտակն անգամ գործարանէն եկած ժամանակը չափուած, ձեւուած ու թուագրուած է, անանկ որ մինակ կտորներն իրենց տեղը անցնելը կը մնայ: Մտքերնուդ կ'անցնէք անշուշտ թէ այս մետաղեայ հրէշները ինչ ահագին քանակութեամբ երկաթ կ'ոսպառեն: Նին-Եօրքի մէջ պանդոկ մը որ 29 յարկ ունի եւ 117 մէթր բարձր է, 13 միլիոն քիլոկրամ երկաթ

սպառած է, մինչդեռ Էյֆէլի աշտարակը 7 միլիոն քիլոկրամով լննցած է. բոլոր կշիռները իրար կցելու համար 960,000 պտուտակ պէտք եղած է, եւ մանրամասնութիւն մը որ գուցէ անհաւատալի թուի, ամբողջ շէնքը չորս ամիսէն աւարտած է:

* * *

Սկսելէն ամիս մը վերջը մետաղեայ կըմախքը աւարտած է: Հիմա որմնագիրները կը հասնին եւ շաղախով ու աղիւտով կը ծածկեն երկաթեայ ձողերը, տանն ամէնէն վերի յարկէն սկսելով ու գէպի վար գալով: Այս աշխատութիւնն ալ հազիւ 15 օր կ'ը տեւէ:

Մտնենք շէնքէն ներս. մըջիւնի պէս գործաւորներ կ'աշխատին ներքին կահաւորումին, մէկ կողմէ թիթեղագործներ կապարեայ խողովակներ կը զետեղեն տաք եւ պաղ ջուր բերելու համար, անդին ուրիշ գործաւորներ երկաթեայ թելեր կը զետեղեն ելեքտրական զանգակներու, հեռախօսի, Լայլնի համար. եւ այս թելերուն երկայնութիւնը առ նուազն 45 քիլոմէթր է:

Գետնին տակը կը զետեղեն 6 ելեքտրականութիւն արտադրող մեքենաներ՝ 80 ական ձիու զօրութեամբ որոնք 3500 լապտերներ պիտի լուսաւորեն:

20 կամ 30 վերամբարձներ շարունակ կը գործեն: Բոլոր պատերն ու սանդուղները պիտի ծածկուին մարմարիտով, իսկ գետինը պիտի փռուին թանկագին գորգեր. շէնքեր կան որոց համար մէկ ու կէս միլիոն ֆրանքի մարմարիտ եւ մէկ միլիոնի գորգ կ'երթայ:

Իւրաքանչիւր վարձակալ իր աշխատութեան սեղանին վրայ ունի հեռախօսը՝ քովը կայ տուփ մը ուր կը ձգէ իր նամակները, նամակը ինքնիրեն սահելով կ'իջնայ մինչեւ վարի յարկը մեծ սնտուկի մը մէջ ուր կը հաւաքուին նաեւ ուրիշ սենեակներէ եկածները: Լրագիր մը բերել տալ, թատրոնի տոմսակ մը գնել Լայլն, ասանկ պզտիկ բաներ ուզուած ժամանակը սենեակին պատին վրայ խոշոր չըմանակ մը կայ, ուր շատ մը բաներու անուններ գրուած են, մէջտեղն ալ կայ տսեղ մը, վարձակալը առտեղը ուզած բանին վրայ կը դնէ եւ կոճակի մը վրայ կը կոխէ, անմիջապէս սպասաւորը կը բերէ ուզուած առարկան:

Քանի՞ միլիոնի կը կարծէք որ ծախք բանայ այս ահագին տունը: Նիւ-Եօրքի Բարք Բօու պանդոկը 2,400,000 տոլարի նստած է (530,000 օսմ. ոսկի)․ եթէ եւրոպական ձեւով շինուած ըլլալ՝ տասն և հինգ անգամը աւելի ծախք պիտի ըլլար առանց ի հաշիւ առնելու անյաղթելի դժուարութիւնները:

Սակայն այս ահագին ծախքը բան մը չէ՝ եթէ իրեն բերած հասոյթը հաշուենք․ միջին հաշուով 1500 վարձակալ կրնայ պարունակել, ինչպէս նաեւ ունի խանութներ, մթերանոցներ, պանքաներ, քլիպներ, լրագրի խմբագրութիւն մը, եւ նոյն իսկ թատրոն մը, որ 4000 հոգի կ'առնէ:



ԱՆԹԵԼ ՇԵՌԱԳԻՐԸ

Երէկուան եղած գիւտէն աւելի դիւրին եւ վաղուան ըլլալիքէն աւելի դժուար բան չկայ:

Լապտերի մը միջոցաւ հեռուէն նշան տալու դրութիւնը ամէն մարդ գիտէ: Լապտերին առջեւ պահպանակ մը կը դնեն որով լոյսը բնաւ չտեսնուիր տրուած լուրը ընդունող կայանէն: Յետոյ պահպանակը յաջորդաբար կը վերցնեն ու լապտերին առջեւ կը դնեն, պահպանակին վերցուելուն թիւին և տեւողութեան կը համապատասխանէ մէյ մէկ գիրեր․ որով լոյսը առնող կայանէն ճշդիւ դիտելով լոյսին երեւումը և անոր տեւողութիւնը կարող կ'ըլլան խըրկուած լուրը կարդալու:

Անթել հեռագրի մէջ լապտերին տեղ դրուած է Ռումքորֆի կարծառ մը (bobine de Rumkorff) և լուսեղէն կայծերու տեղ՝ ելեքտրական հոսանքներ յառաջ կուգան․ այս հոսանքները ծնունդ կուտան ելեքտրական ալիքներու որոնք միջոցին մէջ ամէն կողմ կը ցրուին նման լոյսի ալիքներուն:

Մինակ ելեքտրական ալիքները աչքով նշմարելի չեն․ որով լուրը ընդունող կայարանէն զանոնք կարելի չէ տեսնել:

Արդ անթել հեռագիրը գտնուած եղաւ

այն օրը երբ ելեքտրական արձակումը իւրաքանչիւր ալիքները զգալի ընել տալու միջոցը հնարուեցաւ: Տեսան որ ապակիէ պղտիկ խողովակի մը մէջ երկաթի խիստ նուրբ փոշի լեցնելով՝ այս խողովակը ելեքտրական հոսանքի մը վատ հաղորդիչ է, իսկ եթէ ելեքտրական ալիքի մը մէջ գտնուի, անմիջապէս լաւ հաղորդիչ կը դառնայ:

Պ. Պ. Բօրօֆ, Մարքօնի, Պարլէ իրենց աշխատանոցներուն մէջ սա փորձը կատարեցին: Մօրսի սովորական ելեքտրական հեռագրի մը կապեցին բարդի մը հետ․ ամէն անգամ որ հոսանքը կ'անցնէր թելին վրայէն գործիքը կանոնաւորաբար կը բանէր: Թելը մէջտեղէն կտրեցին և երկու ծայրերէն կապեցին երկաթի փոշի պարունակող ապակեայ խողովակի մը․ ելեքտրական հոսանքը չանցաւ թելին վրայէն, դադրեցաւ: Ռումքորֆի կարծառի մը ելեքտրական ալիքները՝ խողովակին վրայ ուղղեցին, հոսանքը անմիջապէս անցնիլ սկսաւ: Սակայն նշաններ տալու համար պէտք է որ հոսանքը յաջորդաբար կանգ առնէ ու շարունակէ, մինչդեռ վերոգրեալ դիւրին մէջ հոսանքը առանց կենալու միշտ կ'անցնէր և հետեւաբար Մօրսի գործիքն ալ չէր բանէր: Շուտով տեսան որ խողովակին հաղորդելիութեան կարողութիւնը, հետեւաբար ելեքտրական հոսանքին շրջանը կասեցնելու համար, կը բաւէ մատիտով պղտիկ հարուած մը տալ խողովակին․ այս վերջինը անմիջապէս իր վատ հաղորդիչի յատկութիւնը կ'ըստանայ: Գործիքին մէջ այնպէս մը ըրին որ, ելեքտրական ալիքին ազդեցութիւնը զգալի ըլլալուն պէս ալիւմինիումի պղտիկ մարմինը կը վարնէ խողովակին վրայ և հոսանքը անմիջապէս կը դադրի:

Առանց թելի հեռագիրը ալ ևս հնարուած էր:

Լուրը ընդունող կայարանին մէջ Մօրսի պարզ գործիք մը կ'աշխատի ելեքտրական բարդի մը օգնութեամբ, իսկ լուրը խրկող կայարանը՝ զայն առնողին միացնող թելին տեղ՝ ելեքտրական ալիք մըն է որ կ'երկարի: Այս ալիքները մեկնելով լուր տոնող կայանէն կը հասնին լուրը արձանագրող կայանը եւ հոն (գտնուած երկաթի փոշիով լեցուն խողովակին վրայ ազդելով) կը թնշ-

զուհի որ հոսանքը անցնի թելին վրայէն . հետեւաբար , մեկնակէտէն ալիքները երկար կամ կարճ ըլլալով՝ հասած վայրն ալ Մորսի գործիքին վրայ համապատասխան նշաններ պիտի արձանագրուին , ինչպէս կ'ըլլայ սղ-վորական հեռագրի մէջ :

Եւ կամ լուսային հեռագրի լեզուաւ խօսելով . երեքտրական ալիքները արտադրուելուն կամ դադարելուն համեմատ՝ լուրը ընդունող կայանին մէջ արուեստական աչքը պիտի արձանագրէ գանոնք եւ ըստ այնմ պիտի տայ լուրը :

Աւելցնենք թէ երկու կայաններուն մէջ ալ երեքտրական ալիքները արտադրող եւ ընդունող գործիքները կարելի եղածին չափ բարձր ձողերու վրայ կը դնեն , աւելի կատարեալ կերպով գործելու համար . եւ այսպէսով կարող կ'ըլլան մինչեւ 300 քիլոմէթր հեռուէն առանց թելի լուրեր հաղորդել :

Հիշէ՛ք



ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ ՈՒՆԻ ԹԵԼԵՐՈՒ

Թուշուր անխոնջ սասլակիչ միջանցներու :— Անթիւ հրոսներ : Ի՞նչ որ կրնան քնել խիստ փոքրիկները :— Զարթնումն օգտային աշխատաւորներու . — Առաւօտեան նախաճաշ :

Թուշուրները մի միայն գեղանազ հիւրեր չեն դիւղին ու անտառներուն ուր կը պարզեն գեղեցիկ երփներանգութիւնը իրենց իրաւունքներուն ու ներդաշնակութիւնը իրենց երգերուն . անոնք՝ ատկէ զատ , պատուական օժանդակներ են երկրագործութեան : Անգագար աշխատողներ , տարիին ամէն ժամանակին մէջ , օրուան ու գիշերին ամէն ժամուն մէջ , անոնք կը պաշտպանեն ծառերն ու տունկերը , սերմերն ու հունձքերը միլիառներով մեջատներու ահեղ վնասներուն դէմ : Ծառայութիւնները զորս անոնք վեղ կը մատուցանեն այս կերպով՝ անհաշուելի են : Նաեւ միմիայն գութը չէ , այլ շահն ու երախտագիտութիւնը՝ որոնք մեզի զգացնել կրտսան թէ ինչքան կարեւոր է խնայել թուշուրներուն՝ որոնց ջնջուիլը մեծ աղէտ մը պիտի ըլլար զաշտերու աշխատաւորին :

Տիեզերք ամբողջ ներդաշնակութիւն է : Երկրի վրայ , ջուրերուն տակ , երկինքի մէջ , ամէն ինչ իրարու կը յարմարի ու համակըռուի այն աստիճան ճշգրտօրէն որ միակ մէկ մասի մը աճումը կամ նուազումը կը պղտորէ ամբողջին միութիւնը : Իրեքու այժմ հիանալի համակըռութիւնը պէտք էր մեզի նուիրական ըլլար . բայց մեծք նաստիկ տենջով ու տգիտութիւնով մը կ'աշխատինք աւերել դայն եւ աղէտները կուգան մեզի յայտնել մեր անխոհեմութիւնը :

Անթիւ օրինակներ այս ճշմարտութիւնը կը հաստատեն : Դարէ յընդերս անտառներ կտրելու չափազանց սէր մը ունինք : Անոնք հետեւանքն ինչ եղաւ : Անտառները՝ հովերուն դէմ պատեալ մը դրին , որուն վրայ անոնք կը բաժնէին ու կը խորտակէին իրենց ուժը . մեր ծառատուած դաշտագետները՝ ճարակն են փոթորիկներու բռնանութեանց ու վախճանի անբարեխառնութեանց լեռնային երկիրներուն մէջ , ծառատուած հողերն արտադրուելու սկսելէն ի վեր , առաջին անձրեւները քեցին տարին բոլոր հերկելի խաւը . ասիկա ծագումը եւ զաւ սոսկալի ողորումներու :

Ժամանակով հասարակածային Ամերիկայի ծովերուն մէջ տեսալ մը կիտաղգի կար որ հիմա գրեթէ բոլորովին անյայտացած է . կովածուկն է ասիկա : Այս կենդանիները կուգային թունաւոր խոտերն ուտելու որ կ'աճին Ամազոնի ու Օրինոքոյի գետաբերանները : Այնչափ կեցան ու հատուցին որ , ուղղապահութիւնը կրցաւ իր պաշտօնը լեցնել , ու դեղին տենդը , (տեսալ մը մահացու տենդ) , անձանթ եղան ամբողջ Մեքսիկեան ծովածոցին ափունքներէն : Բայց եւրոպայի վաճառականներ խորհեցան կովածուկին իւղը մզել . որսորդութեան անհրաժեշտ իրերն անդուխի մը վրայ պատրաստեցին ու ջարդն սկսաւ : Աղէտքը իսկոյն իր երեւումը յայտնեց . եւ այսօր , այդ ժանտախտը ջարդեր կ'ընէ Լա Բլադայի գետաբերանէն մինչեւ Միսիսիբիին ու պարբերաբար աւերումներ կը գործէ Նոր Օրլէանի եւ Ռիօ տը Եանէյրոյի մէջ :

Բայց ամէնէն աչքի զարնող օրինակը այս չափազանց սէրին որ զմեզ կը մղէ ջնջելու մեզի օգտակար եղող խնամիկներն՝ այն մոլեգին պատերազմն է որ կ'ընենք թռ-

շունին դէմ: Մենք կը ստգտանենք զանի մեր հունձքերը թալլելուն եւ մեր միգաստաններն աւարելուն համար, ու հետեւաբար զայն կը ջարդենք:

Անշնորհ ենք՝ կը ջնջենք մեր սքանչելի բարեկամն: Ինչպէս ամէն էակ բնութեան մէջ, նոյնպէս թռչունն ալ ունի ընդհանուր ծրագիրին մէջ, իր խաղալիք դերը, իր օգտակար պաշտօնը: Ասիկա կը կայանայ մեզ միջատին դէմ պաշտպանելուն, մեր դաշտերուն այս թշնամիին դէմ կռիւ մը փարելուն մէջ որ առանց անոր ամբողջ մըշակութիւնը անկարելի պիտի դառնար:

* * *

Այս մանր հակառակորդը զարհուրեցիչ է: Անտեսանելի, անհամար միջատներն ամէն տեղ են: Իրենց աւերումի գորութիւնը սոսկալի է: Լինէ հաշուած է որ երեք ճանձ, սերուններուն հետ ուրկէ կ'ելլան, պիտի լափէին ձիւ մը դիակը այնքան արագ որքան պիտի ընէր զայն առիւծ մը: Ժնրդ դարուն սկիզբը, Հոլանտա կը կոխուէր ծովէն, թումբերուն վարսացիցերն ամէնը մէկ անդամէն խցրտակուած էին: Պարզ ճճի մը ըրած էր ամբողջ Գլապը: Ծակորդն է ատիկա: Ամենաստակալի կրծող մըն է ան, նայուածքներէ կը խուսափի, միայն ներսի կողմեր կ'աշխատի, յամրաբար կը փորէ շէնք մը, նաւի մը տախտակամածը, մինչեւ որ ամբողջ կազմածը տապալի կամ կոհակներուն մէջ մխրձի: Ո՞վ ուրեմն պիտի պաշտպանէ մեզ անոր դէմ: Թռչուն մը որուն հարկինքը նախընտրելի է, որ գիտէ գտնելը թէ ո՞ր կը պահուորտի ան — ճճին — ու զանի դուրս հանել փայտին բուն մէջտեղէն: Այնպէս որ Աղջկահաւը Հոլանտայի պահպանիչն է:

Կամուրջ մը կործանել. նաւ մը կ'լլել, ահա արդէն կ'երեւայ միջատին կրցած սոսկալն արդիւնքները: Դեմիսը ասիէ աւելին կրնայ ընել: Քարաքասի մօտ, Վալէնցիայի տակ, իր լէգէոնները բոլոր ստորերկրեայ շինուածները լափած ու ճշմարիտ գետնափորներ ծակած են: Քաղաքը այսօր օդէն կախում ունի որ կրնայ մէկ վայրկեանի մէջ վիհի մը մէջ կ'ընէ՝ իր տուններովն ու իր բնակիչներովն հանդերձ, Լա Ռօշէլի մէկ քանի թաղերը արդէն Վալէնցիայի ճակատագրին վիճակած են ու չենքերն իրենց հիմե-

րուն վրայ կ'երերան: Ինչպէ՞ս դիմադրել միջատներու որոնց էգը, կը բեղմնաւորէ երկու սերունդ, եւ քսանըջորս ժամու մէջ 80,000է աւելի հաւկիթ ածելով, կուէնիայի մէջ ուր իրենց բնակութիւնը երբեմն քսան ոտք բարձր կ'ըլլայ, ու մի միայն հեռուէն ու վառօդով կը համարձակին մարդիկ անոր վրայ յարձակիլ: Ո՞վ ուրեմն անոնց դէմ զօրեղ պատերազմ մը գլուխ հանէ պիտի: Այս լեռնակներուն մէջ վխտացող միլիոնաւոր միջատներուն դէմ միայն Մըրչնաֆալը յաղթէ պիտի: Սեպեցէ՞ք թէ մըրչնաքաղը աներեւութացած է ու յիշեցէ՞ք Միշլէի պատմած գինով մարդը՝ որ կենդանի մը դիակին քով իյնալով կ'ապակոնի: Միջատները մարմինին տէր եղան ու այնպէս թափանձեցին ամբողջ գործարանները որ կարելի չեղաւ բան մը փորձել զայն ազատելու համար: անիկա զարհուրելի ցաւերու մէջ վերջին շունչը տուաւ: Մտածեցէ՞ք այս տեսակ գումարտակներէ կ'ուած քաղաքի մը բաղդին:

Ինչ հակառակորդներ են արեւադարձներու միջատները՝ իրենց ահեղ կազմաւորութիւնովը աքցաններու, ակաւներու, սըղոցներու, ծծոցներու, միջատներ՝ շողշողուն ու բզզացող՝ որոնք կը կտրտեն մէկ վայրկեանի մէջ ինչ որ երկրին վրայ կ'իյնայ ու շուտով կը մեռցնեն անխոհիմ քնացող մը: Բայց մենք անոնց դէմ երկու թըշնամիներ ունինք մեզի խնամի, ձմեռահաւը ու Մեղուահաւը:

Կենանք Ֆրանսայի հողին վրայ: Եթէ մենք շունինք Հոլանտայի ծակորդն, ո՛չ ալ Անգլիկաններու լուսատու ճանձերը, եւ ոչ մարախներու ջուկը, ունինք ջորեակներ, ուտիճներ՝ որոնք կ'ուտեն մեր ցորենները, մեր բանջարեղէններն ու մեր պտուղները: Անոնք՝ երկրագործէն կը գողնան տասներորդ մը, հինգերորդ մը, երբեմն հունձքէն, ու տարին, կ'ըլլայ, միջին հաշուով կորուստ մը բազմաթիւ հարիւր միլիոններու՝ տասը երկիւրոն արտադրութեան մը համար, ու կը յիշուին տարիներ ալ՝ որոնց կորուստն հաւասար եղած է հողային տուրքերու արժողութեան: Պէտք պիտի ըլլար, զարմանալու համար այսպիսի դումարներու, ու անգիտանալ մեր թշնամիին արգասաւորութեանն ու անկշտութեանը:

Տասնը հինգ օրոշան մէջ որքալուինք իր հաւկիթէն ելլելէն ետքը, ինք կ'ածէ 200էն 950 հաւկիթ, ուրկէ պիտի ելլեն իրենց կարգին ոտրիչ որթալուիծներ հաւկիթներուն թիւին չափ խոշոր. սոսկալի կանոնադրութիւն իրենց բազմացումին մէջ, որ բամբողջ հարաւային նահանգները աւերած է: Ծնունդագործութեան չարքերն իրարու կը յաջորդեն այսպէս ապրիլէն մինչեւ օգոստոս: Գարունին ելած միակ հաւկիթ մը՝ աշունին արտադրած է բազում միլիոններ: Երեք ծննդագործութեան մէջ, մէկ այգիի մը պարունակած հաւկիթները կ'արտադրեն ութը միլիոն որթալուիծներ: Գալով թրթուրներու անյագութեան, պտուղներ, ծաղիկներ ու բանջարեղէններ կրծելուն, Ռէօմիւր կը պատմէ թէ, տեսած է՝ մէկ օրուան մէջ ուտելնին կշիռ մը կաղամբի տերեւներու որ կը համապատասխանէ իրենց մարմինին կշիռքին երկու անգամին:

Թարգ. ՎԱՀՐԱՄ Յ. ԴԱՐՁԱՇԵԱՆ

ԳՐԻԳՈՐ ԾԱՐԳԱՐՅԱՆ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Ա. ԵՒ Բ. ՏԱՐԻ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԵՂԱԴՐԱԿԱՆ

ԲՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Կեդրոնացեղին Ե ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Դ Ի Ն 2,50

Ո՞Վ ԶԻ ԿԱՐԴԱՐ

ՔԱՍԻՄԻ ԹԱՐԳՄԱՆԱԾ

ԱՆԽԱՐՀԱՔԱՐ ՆԱՐԵԿԸ

Կը հրատարակուի Մանգումիի Էֆեսար օրաթերթին մէջ. Սեպտ. 11էն սկսեալ (Թիւ 431). Ուրբաթ օր, իբր թերթօն:

ԱԹԵՆՔԻ ՄԻՋԱԶԳ, ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍԸ

Ն. Ա. Բ. ՑՈՒՆԱՍՏԱՆԻ

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒՇԻՒՆ

ՀՈՎԱՆԱԿՈՐՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Յառաջիկայ գտնան Աթէնքի մէջ պիտի բացուի միջազգային ցուցահանդէս մը և որ պիտի տեսէ 1903 Մարտ 25էն մինչեւ Սեպտեմբեր 30: Երազիրները պատրաստուած և յանձնախումբերը կազմուած են արդէն. սոյն ցուցահանդէսը պիտի ունենայ համաշխարհային երեսոյթ մը, որովհետեւ, ամբողջ աշխարհի արհեստագէտ դասակարգին կոչ մը կ'ըլլայ մասնակցելու անոր:

Հետաքրքրութեան համար մեր ընթերցողներուն կը ներկայացնենք քանի մը մանրամասնութիւններ քաղելով խմբագրութեանս խրկուած մասնաւոր շրջաբերակաւնէն:

Ցուցահանդէսին ամբողջ տնտեսութեան միջոցին քան թատրոններ ու քոնսերներ բաց պիտի ըլլան հասարակութեան և հին Ողիմպիական խաղերու տեսարաններ պիտի սարքուին:

Ցուցահանդէսը պիտի ընդգրկէ վաճառականութեան, ճարտարարուեստի, երկրագործութեան, դաստիարակութեան, գեղարուեստի, առողջապահութեան ճիւղերը եւ պիտի բաժնուի 15 դասակարգերու:

1. — Մեքենայներ, երկրագործական արտադրութիւնք, պարտիզպանութիւն և այլն: 2. — Հանքաքանութիւն, մետաղներ, մարմարիոն, և այլն: 3. — Ձկնորսութիւն: 4. — Աղատարարի կազմածներ՝ հրդեհի, փոթորիկի և այլ արկածներու պահուն: 5. — Սնունդներ՝ շաքար, խմորեղէն, զրտող գործիքներ, կարագ, պանիր, մեղր, և այլն: 6. — Որս և խաղեր: 7. — Նմոյթ (մտա) գլխարկ, հագուստ, տանթէլա, սեղմիւրան, կարի մեքենայ և այլն: 8. — Առողջապահութիւն եւ բժշկութիւն: 9. — Կառք, օթոմօպիլ, հեծանիւ և ելեքտրական գործիքներ:

10. — Գեղարուեստ ու ճարտարապետութիւն: 11. — Ճարտարարուեստ, հան-

քեր, քրիստական արտադրութիւնք, ճշդ-
դաշտի գործիներ, քառու, եայլն : 12 —
լուսանկար, տպագրութիւն, գրատուն, գոր-
ծիք, գիտական առարկայներ եայլն : 13. —
հնկերական տնտեսութիւն : 14. — Դաստի-
արակութիւն, հրատարակութիւն, գիւտեր
եայլն : 15. — Նախորդ խումբերու չպա-
րունակածները հոս կը դասակարգուին :

Բոլոր վաճառականները կամ չահակից-
ները որոնք պիտի ուզեն իրենց ապրանք-
ները ցուցադրել՝ պարտին դիմել Տնօրէն
Վարիչին պարոն Ժ. Պինլօրի, անոր զրկե-
լով իւրաքանչիւր ապրանքէն 3 քիլօ եթէ
հաստատուն է և կամ 6 շիշ եթէ հեղուկ է :
Տեղերու վարձքերն են, մինչեւ երկու
քառակուսի մէշը՝ իւրաքանչիւր քո. մէշը
100 ֆրանք, 2էն մինչեւ 10 քառ. մէթը՝
50 ֆրանք քառ. մէթը, իսկ անկէ աւելին
30 ֆր. իւրաքանչիւր քո. մէթը համար :

Յաջորդ թիւերով կը յուսանք աւելի
ընդարձակ տեղեկութիւններ տալ և չէն-
քին մասերը ցուցնող մէկ քանի լուսանը-
կարներ դնել :

“ՀԱՆՐԱԳԻՏԱԿ”

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ինչպէս անգամ մըն ալ ըսած էինք ար-
դէն, չենք ուզեր խմբագիրներուն սովո-
րական յանկերգը կրկնած ըլլալ ըսելով թէ
մենք նիւթական շահէ աւելի, մեր համայն-
քին օգտակար գործ մը ըրած ըլլալու հա-
մար է որ թերթ կը հրատարակենք :

— Մինակ բան մը — և որ իրական ալ է
— սա է թէ մեր բաժանորդները պոռագեցին
թէ՝ թերթին ունեցած ընդունելութիւնը
աճելուն համեմատութեամբ մենք ալ Հան-
րագիտակր աւելի զարգացուցինք : Իբր տը-
պարանապետ՝ մեր ունեցած հրատարակչա-
կան բոլոր գիւրութիւնները ի շահ թեր-
թին գործածեցինք և ասոր շնորհիւ կարող
եղանք մեր բաժանորդներուն ներկայացնել
պատկերազարդ քերք մը 18-20 երեսնոց
մալուր եւ խմամեալ պարունակութեամբ ու
սպագրութեամբ որու 52 թիւերը մի միայն

35 դահեկան կ'արժեն, հետը հաշուելով
թղթատարի ծախքն ալ :

Շատ տեղերէ մեր ուշադրութեանը
յանձնած էին թէ աղքատիկ տղաքներ սի-
րով պիտի կարգային Հանրագիտակր, բայց
անոր բաժնեգիրն իրենց քսակներուն չէր
յարմարեր : Ուղղակի մեր նպատակին ծա-
ռայած ըլլալու համար բաժնեգիրն կը զեղ-
չենք, անանկ գումարի մը՝ զոր ամենէն
բարեկեցիկ տղան անգամ պիտի կրնար ճա-
րել ՕՐԱԿԱՆ 4 փարայի խնայողութեամբ
մը : Անշուշտ մեր ընթերցողներուն քաջա-
լերանքին արդիւնքը պիտի ըլլայ եթէ մեր
ԵՐՈՐԴ տարին սկսինք 20 զրուշ բաժնեգի-
նով մը 52 թերթի փոխարէն, բայց մինչև
այդ օրը տակաւին ժամանակ ունինք :

Թող մեր ընթերցողները չկարծեն թէ
բաժնեգիրն այսքան աժանցնելով թերթին
պարունակութեանը հոգ չպիտի տարուի,
ընդհակառակը. ամենէն մեծ զբաղումնիս
այդ պիտի ըլլայ արդէն, մեր բաժանորդ-
ները շատ պիտի հետաքրքրուին տեսնելով
պատկերազարդ հանելուկներ, ամբողջ գու-
արձալիք մը՝ պատկերներով բացատրուած,
ժամանցի համար հարցումներ ու խաղեր,
զուարճալի մրցումներ ուր շահողը արժէ-
քաւոր նիւթեր, (տուփ մը այցաքարտ,
գիրք մը) պիտէ ընդունի : Գալով թերթին
առաջնորդող յօդուածներուն՝ դարոցավա-
րութեան համար յատուկ գրութիւններ պի-
տի հրատարակուին, որոնց համար ու իցէ
ծախք ընելէ չպիտի խրտչինք, առանց
զանց առնելու նաեւ գիտական ու գրական
նորութիւնները զորս պիտի համեմենք օրը
օրին եւրոպական թերթերու մէջ հրատա-
րակուած պատկերներով :

* * *

Մեր յարաճուն բաժանորդներուն կ'ի-
մացնենք թէ այս չըջանի առաջին թիւերը
սպառած ըլլալով՝ նոր բաժանորդները
զալ տարուան չըջանին համար արձանա-
գրած ենք և այս վերջացող տարույն
վերջերը լոյս տեսած թիւերը (32-36) իբր
նուէր պիտի խրկենք իրենց :

Շարաթական Հանրագիտակի տարեկան
բաժնեգիրն է :

Պոլսոյ համար 30 զրուշ

Գաւառներու համար 35 զրուշ

Հատը 30 փարա

վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդ չընդունուիր :

Թղթատարի ծախքը խմբագրութեանս վրայ :

Շաբաթական Հանրագիտակի բաժանորդագրութիւնը այժմէն բացուած է, փափաքողք կրնան դիմել ուղղակի խմբագրութեանս և կամ հանդէսիս Մեծ. գործակալներուն :

Կը խնդրենք մեր Մեծ. գործակալներէն որ Հանրագիտակի 33 թիւէն մինչեւ 36րդ թիւին աւելորդ զրկուածներն, իրենց ծանօթներուն ու բարեկամներուն յանձնեն յաջորդ շրջանի վրայ գաղափար մը ստանալու համար :



ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Իզմիր հրատարակուած Արեւելեան Մամուլ կիսամսեայ հանդէսն, 1903 յունվար 1էն սկսեալ շաբաթաթերթի պիտի վերածուի, տարեկան 298 էջի յաւելում մը կրելով :

Բաժանորդագրութիւնը այժմէն բացուած է, Թուրքիոյ համար տարեկանը պիտի ըլլայ 50 ղրշ. և ձեռքէ պիտի ծախուի 1 ղրշ. ի :

Յաջողութիւն կը մաղթենք մեր սիրելի բարեկամին ու պաշտօնակցին :

ԱՐԲՍՀԱՍՄ Ս. ՀԱՅՐԱԿԵԱՆ

Ա. Գ. Ի. Բ. Գ.

ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՏԱՐԱԿԱՆ Ա. Ե. Բ. ՏԱՐԻՆԵՐՈՒ



ՏՊԱԳՐ ԴՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Գ Ի Ն 3 1/2 Ղ Ր Շ.

Դպրոցներու համար մեծաքանակ գեղջ Կեդրոնացեղին է Մեծ Շուկան Սքա Օսալար ծանօթ փողագրիչ Դ. Խոսկանց Էֆենտիի 26 թիւ սենեակը :

Թերթին խմբագրութեան ու բաժանորդագրութեան, ամէն տեսակ թղթակցութեան համար դիմել մինակ սոյն հասցէին

نشانه بربریان مطبعی

استانبول باب عالی جاده سی نمره 38

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՂ - ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Կ. Պոլիս Պապ-Ալի ճաստէսի թիւ 38

NICHAN BERBERIAN

IMPRIMEUR-ÉDITEUR

Slambouli, Bab-Ali Djaddessi N. 38

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան Աֆիոն Գարահիսար, Աշոտ էֆ. Պազպազեան Սիրոկիս, Խաչիկ էֆ. Գ. Թաշեան Ներզկա, Պարոյր էֆ. Արզուման Ջմիր Ոնիա Կարապետ էֆ. Մալէճանեան Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան Թէֆլիսաղ Ասատուր էֆ. Արսէնեան Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան Կիւրիւն, Միսաք էֆ. Խանդամուր Հալեպ, Ս. էֆ. Ամատեան Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան Մալաթիա, Գրիգոր էֆ. Թաշեան Մարաշ, Արթ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան Մարզուան, Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Աղարեան Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան Սիմ հանի Էֆոյ Ա. էֆ. Կ. Կիւլպէնկեան Վեգիր Էֆօքիւ » » » Տիւրպէիք, Լեռն էֆ. Սրապեան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԴՇԱՆ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

Հին Ուխտի (Սրբազան պատմութիւն)	4
Նոր » » »	4
Պազկաքաղ (Ընտիր կտորներ ընթերց.)	3
Ֆրանսերէն պատկերազարդ ֆերական	2
Կ. Տէմիրեան էֆ. ի Իրազիտութեան Ամբողջական դասընթացքը	
Մաղկաքաղ եկեղեցական պատմութեան	4
Սուրբ Երկիր կամ Տեղագրութիւն Ս. Երուսաղէմի (պատկերազարդ)	10
Տօնակարգ Հայ. Ս. Եկեղեցւոյ	12
Քրիստոնէական (Ս. Խանճեան)	2
Ժողովրդական Տարեցոյց	6
Դամէլազարդ Տիկին (Նոր տպագրութիւն)	8
Բուրաստան Մանկանց (Տարեկանը)	10
Աղթաղիք	10

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ - ԱՐՏՈՆԱՏԵՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՂ - ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Պապը Ալի ճաստէսի, Թիւ 38, Էգտամ լրագրին դէմ

խաղաղ ծառայության

847014 444343 70844 22 444 444444 444 3040 44444

Unabhängig d. westeuropäischen Kunst

[illegible][illegible]

40. Ի՞նչ մասնավոր դեպքեր 20 փոխան :

77252

2 1 4 0 2 0 1

ॐ नमो भगवते वासुदेवाय

8-1-6

9-13

6. F. 3

[illegible]

ՆՇԱՆԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

Կ. ՊԱՐԻՍ, ՊԱՊԸ ԱՆԻ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻՒ 38. ԻՆՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԻՄԱՑ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը տպագրէ ամէն
սեւակ գիրքեր, մահ-

ազգեր, հանդեսներ, օրգրքերականներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագրութիւններ, այ-
ցաբարդեր, եւ տպագրութեան վերաբերեալ ամէն սեւակ պիտոյններ: — Տպարանին սեփական
20000 Է աւելի պատկերները յանձնորդաց տրամադրութեան տակ են ձեր:

Անմրցելի մաքրութիւն եւ ճշգրտութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամէն սեւակ յանձնարարութիւններ:




ՀԱՆՐԱԳՐԻՏԱԿԻ նոր բացած Շարադրութեան մրցումներն
մասնակցողները պարտին սոյն կտրոնը կտրելով՝ իրենց գը-
րութեանց հետ ղրկել իմրագրութեանս, հակառակ պարա-
գային՝ նկատողութեան չեն առնուիր:

Հանրագիտակ ձեռքի կը ծախուշի Պոլսոյ մէջ հատ
40, իսկ գաւառաց մէջ 50 փարսյ:

Թ Է Յ

Թ Է Յ

Թ Է Յ



Ը Ն Տ Ի Ր

Հ Ո Տ Ա Ի Է Տ

Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Է Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը պատրաստ՝ Է թէ օր ըստ օրէ
հասնող թարմ Է աղնուագոյն տեսակ թէյերով կրնայ այսօր անմրցելի աժանութեամբ
գահացում տալ նոյն իսկ էն խտապահանջ թէյի սիրահարներու: ԵԱՎՐՈՒԵԱՆ Է ԻՍԱ-
ԳՈՒԼԵԱՆ հաստատութիւնը կը թղթակցի գաւառներու հետ եւ յանձնարարութիւններ կ'ը
կատարուին ամենայն ճշգրտութեամբ:

Աժան, ընտիր ու հոտաւէտ թէյ գործածողներու ջերմապէս կը յանձնարարենք ան-
գամ մը այցելել Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Է Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ վաճառատունը, ձէլալ-Պէյ խանի
հից թիւ 10, ուր պիտի գտնեն մեծաքանակ Է փոքրաքանակ թէյի ճոխ մթերք մը:

Ա ժ Ա Ն

Ա ժ Ա Ն

Ա ժ Ա Ն